





Շ Ա Ի



Շ Ա

ԼԵՀԱՍՏԱՆԻ ՎԱՐՇԱՒԱՆՈՒ ՎԻԼՆԱ

ՔԱՂԱՔՆԵՐՆԵՐ

Լեհաստան որ և Պոլնիա, ընդարձակածաւալ դաշտագետին մ'է, տեղ տեղ բուսաբեր, տեղ տեղ աւազուտ և

ճախնային, և տեղ տեղ ալ անմշակ ու անտառային: Երկիրն Լեհաստան և ազգն Լեհացիք կոչուեցան իրենց Լեհի անուն առաջ: Նորդէն որ կ'իջևէր Ձ դարուն սկիզբը, և ընդարձակեց իշխանութեան սահմանը ընդ մէջ վիսգուլա, Լեցա, Գըրաքաքա և Պոպերա գետոց: Իսկ Պոլնիա կոչուելուն պատճառն ալ դաշտային երկիր ըլլալն է: Մինչև ցամա 1295 առաջնորդը Լեհաց դուքս կամ իշխան կը կոչուէին, և նոյն թուականին առաջին անգամ թագաւոր անուանեցաւ Պրեմիսլաւոս: Իրմէ ետքը անուանի եղաւ քաջութեամբ և իմաստութեամբ Մեծն Կազիմիր, որ հիմնեց Գրաքովոյ Համալսարանը: Ժեղարուն մէջ գրաւեցին զԼիթուանիա, և աւերութիւն ընդարձակելով ու զօրանալով նշանաւոր եղան Եւրոպիոյ մէջ: Մինչև ցամա 1620 Լեհաց թագաւորութեւ սահմանն 50,000 քա-

ռակուսի փարսախ էր, որ 1772ին եղաւ 35,000, ու ժողովուրդն ալ 12,500,000. և երկիրն երեքի բաժնուեցաւ, Հպատակելով՝ Ռուսաց, Բրուսաց և Գերմանացոց: Դիվիդայ Հաշտութեան մէջ պայմանադրեցին

